ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2021 թ. թիվ 369 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԳՍ/15.2/31312-2021 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով

ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

Վ.Սուքոյան	-	Հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա.Աչինյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության պետ
Ա.Ամիրխանյան	-	մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ
Զ.Մարդանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ԳԽՆՄ վարչության Տավուշի բաժնի պետ
Կ.Մկրտչյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ
Գ.Վիրաբյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ
Ա.Խաչատրյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ
Ն.Հարությունյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ:

2. Հանձնարարել հանձնաժողովին մինչև 2022 թվականի հունվարի 30-ը մարզում անցկացնել գյուղատնտեսական կենդանիների հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

3. Մարզի համայնքների ղեկավարներին՝ ստեղծել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանին:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

08.12.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 8
Իջևան